

Վրաստանի երիտասարդները ցույց են կազմակերպում ցածրորակ հեռուստատեսության դեմ

Մարտ 28, 2011

Վրաստանի երիտասարդները ցույց են կազմակերպում ցածրորակ հեռուստատեսության դեմ

 [perfomansi_1.jpg](#) [1]

Թբիլիսիի կենտրոնում երիտասարդների 30 հոգանոց մի խումբ բողոքի ակցիա էր կազմակերպել ցածրորակ հեռուստատեսային շուկայի դեմ:

Ցույցի կազմակերպիչները Շոթա Ռուսթավելու արձանի մոտ տեղադրել էին հեռուստացույցի խրտվիլակ, որի էկրանի վրա պատկերված էր ճառագայթման խորհրդանիշ: Թղթի վրա յուրաքանչյուր ոք հնարավորություն ուներ գրելու իր չսիրած հաղորդման անվանումը և տեղադրելու այն «հեռուստացույցի» մեջ:

Ըստ կազմակերպիչների՝ Վրաստանի հեռուստատեսությունը ողողված է ցածրորակ հաղորդումներով, որոնք փչացնում են հեռուստադիտողների ուղեղն ու մտածելակերպը: Ակցիայի կարգախոսն էր «Մի կեղտոտեք մեզ»: Ակցիայի շրջանակներում մասնակիցները շորի կտորտանքներ լվացին՝ պատկերելով մարդու ուղեղը:

Մտահաղացման հեղինակները Facebook-ի անդամներ են: Նպատակը արտասովոր ճանապարհով վրացական հեռուստատեսության ցածրորակ հաղորդումների դեմ բողոքի արտահայտումն էր՝ կոչ անելով ստեղծել հեռուստատեսային ծրագրեր հիմնված մարդկանց իրավունքների վրա:

Աղբյուր: [Media.ge](#) [2]

Թեմատիկ նյութեր

[Գրիգոր Ամալյան. «Սարք ունենալ-չունենալը դիտեք որպես սեփական հայեցողություն. ոչ թե իրավունքի սահմանափակում»](#) [3]

[2012 թվականի ընթացքում ԼՀԱ-ի իրականացրած հետազոտությունները](#) [4]

[ԼՀԱ-ի ծրագիրը One World Social Innovation միջազգային մրցույթի լավագույնների շարքում](#) [5]

[Ditaket.am: Հաշմանդամ աղքատ երազանքն իրականություն դարձավ](#) [6]

[Irazek.am ընտրական ուղեցույցում քաղաքացիների հաղորդագրությունների վերլուծություն](#) [7]

Source URL: <http://www.jnews.am/node/974>

Links:

[1] http://www.jnews.am/files/perfomansi_1.jpg

[2] <http://www.media.ge/en/node/40690>

[3] <http://www.jnews.am/interview-with-grigor-amalyan>

[4] <http://www.jnews.am/jff-studies-2012>

[5] <http://www.jnews.am/jff-project-on-one-world-social-innovation-award>

[6] <http://www.jnews.am/mane-asryan>

[7] <http://www.jnews.am/research-result-of-voters-complains-on-irazek>